

ՍՍՀՍԿ ԿԹՂ. ՍՍՈՅ, ԽՍՊԱՅԵԱՆ, ԽԱՐԲԵՐԴՅԻ.— Մը. Ծ. 1849ին, հայրը միս. Կարապետ, մայրը Գոհար. ընթացաւարտ ժառ. Վարժ. 1867ին, Խմբագրապետ Սիօնի (1874—1879). Զո. 1877ին. կը ճամբորդէ Հալէպի ճամբով իր հայրենիքը՝ Խարբերք և Պոլիս, յետոյ կը վերադառնայ Երուսաղէմ՝ 1879ին. ՏԳ. 1880ին. Նւ. Ռուսաստանի (1881—85). Լսպ. 1884ին եւ արքեպս. 1902ին. պատուիրակ Սոյ կաթողիկոսական ընտրութեան 1899ին. կաթողիկոս Սոյ 1903ին. Սահակ կթղ. 1903—1914 բուն ջանք մը ունեցած է դիմումներ կատարելու բարեգործ ծանօթ անձնաւորութիւններուն մօտ, որպէսզի նիւթական օգնութիւններով նպաստեն Սոյ Մայրավանքին մէջ ժառ. Վարժ. մը բանալու, տեւրեալ տեղերը նորոգելու, կարեւոր կեդրոններու մէջ երկրորդական վարժարաններ ունենալու եւ Կիլիկեան թեմերը օժտելու պիտանի շինութիւններով, շատ քիչեր են որ կը պատասխանեն կթղ.ին սրտառուչ կոչերուն. և ընդհանուր պատերազմն ալ վրայ գալով՝ բոլորովին կը խափանուին նոյն ազգօգուտ մտադրութիւնները:

Ընդհանուր պատերազմին Հայոց տեղահանութեան եւ հայ գաղթականութեան, ինչպէս նաեւ Կիլիկեան գաւառներու մէջ տեղի ունեցած արիւնոտ զէպքերուն եւ կսկծալի իրադարձութեանց պատճառաւ Սահակ կթղ. ազգու և սրտածմլիկ դիմումներ կատարած է Օսմանեան նախարարութեան եւ տւազանիին մօտ եւ նկարագրած է ժողովրդեան թշուառ ու անտանելի վիճակը և դարման խնդրած է, միևնոյն ժամանակ ընդարձակ տեղեկագիրներով Ազգ. Պատրիարքարանին պարզած է ժողովրդեան քստմնելի կացութիւնը ու սպառնացող ահաւոր վտանգը:

Իր պաշտօնավարութենէն մինչև ընդհանուր պատերազմին 1915 տարին փոխանակած կարեւոր թղթակցութիւնները Կիլիկեան Կսկիծներ խորագրով կաթողիկոսական դիւանէն հրատարակուած են (տպ. Պէրութ, 1927): Սահակ կթղ. նոյն ժամանակ ինքն ալ կը տարագրուի Երուսաղէմ՝ Ս. Յակոբի վանքը, քանի մը Կիլիկեցի միաբաններով և մաս մը ժողովուրդով: Նոյն միջոցին պետական հարուածով, Կ. Պոլսի Ազգ. Սահմանադրութիւնը և պատրիարքութիւնը կը ջնջուին, Զաւէն պտրք. կ'աքսորուի և նոր հրատարակուած Էրեւնի կաթողիկոս վի բարրիֆ նիգալնաւիսի հրահանգին համաձայն, Սոյ եւ Աղթամարի